



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
~~842.5-5~~
U-79

3258

891.71

U-79

75
ԱՒԵՆԱՐԻՈՒՍ

608

ω 600x

ՅՐԻՏԵՕՖ ԴԻԻՅԱԶՆ

ՆՈՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՆ ԶԲՈՅՑ

«ԱՂՔԻԻՐ» ԱՄՍԱԳՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ № 7

Փոխադրեց

N 206m

ԼԵԻՈՆ ՄԵԼԻԲ-Ա.ԳԱՄԵԱՆ

793

2003

ԹԻՖԼԻԶ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԵՆ ՓԵՂՈՑ. 1, 2

1886

842.5-3
4-79 7

ԱԻԵՆԱՐԻՈՒՍ

ՖՐԻՏԵՕՖ ԴԻԻՑԱԶՆ

ՆՈՐՄԱՆԵԿԱՆ ՀԻՆ ԶՐԱՅՑ

1010
40342 P

ՄԱՂԱՐԻՐԻ
1886 թ. ԱՌԱՋԻՆ ՊՐԷՄԻԱ

Փոխադրեց

N 206m

ԼԵՒՈՆ ՄԵԼԻԲ-ԱԴԱՄԵԱՆ



9

ԹԻՖԼԻԶ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ


ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՊՈՑ, 1, 2

1886

20

ՄԶՆԻՐ ԹՈՒՆԴԵՐ

ՀԱՅԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



ԳՐԱԴԱՐԱՆ


ՀԱՅԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Декабря 1885.

Типографія И. Мартиросіанца, Орбел., ул., д. 1/2.

1885



ՖՐԻՏԵՑՑ ԴԻԻՑԱԶՆ

ՆՈՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՆ ԶՐՈՅՑ



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ազար տարուց էլ շատ ա-
ռաջ, — մինչդեռ հարաւա-
լին Եւրոպայում գիտու-
թիւններն ու արուեստները
բաւականին բարձր աստի-
ճանի զարգացման էին հա-
սած, մինչդեռ քրիստոնէա-
կան պաշտօն լոյսը հետըզ-
հետէ սփռւում էր դէպ հե-
ռու Հիւսիս, — Սկանդինա-
ւիայի՝ այնժամանակուան
ն ո ր գ ւ ա ն դ ի ա յ ի ժո-
ղովուրդը տակաւին իարիսափում էր սկզբնական տղիտու-
թեան ու հեթանոսութեան խաւարի մէջ: Հիւսիսի այդ վայ-

ընել ընակելիները՝ որոնք նորմաններ^{*)} էին անուանվում, յալտին էին ֆրանկներին և հռովմայեցիներին իրանց յանդուգն ասպատակութիւններով: Նրանք սովորութիւն էին շինել իրանց համար՝ խումբիումը նստում էին թեթեւութեամբ նաւակներում և պատերազմական ահեղ գոչիւնով յանկարծուստ յարձակվում հարաւային ծովեզրեայ ծաղկած երկիրների վրայ ու յափշտակում ամենը՝ ինչորդնոջ էր լինում, և աներևութանում: Ուրեմն զարմանալի էլ չէ, որ բարեկիրթ և փափկասուն հարաւայինները նրանց համարէին աւազակներ, չարագործներ, անգամ սատանի ծնունդներ:

Բայց միթէ իրաւ նրանք այդպէս էին: Միայն մեղ հասած սկանդինաւեան ժողովրդական զրոյցները բոլորովին ուրիշ կերպով են նկարագրում նրանց:

Ներկայ սկանդինաւիայի երեք թագաւորութիւններից՝ Նորվեգիա, Զվեգիա և Գանեմարքա, — այնժամանակ Նորվեգիան առաջին տեղն էր բռնում: Նրա լեռներն աւելի բարձրաբերձ էին և սեպացեալ կողքերով հակուած դէպի բաց ովկիանոսը, անտառներն աւելի խիտ էին և հարուստ ամեն տեսակ վայրի զազաններով, գետերն աւելի սրնթաց և առատ տեսակտեսակ ձկներով: Երկրի ամբողջ արեւմտեան մասը՝ որ բաղմամբիւ ժայռոտ ծովածոցեր ունէր, բաց ծովին էր նայում: Բլեւռային սաստկաշունչ հողմերը բարեխառնվում էին նրա փերն ողողող հովիտներէ մի տաք հոսանքներով: Երկրի թէև դաժան՝ բայց փառահեղ բնութեանը համապատասխանում էր նրա մէջ ծնուած ու սնուած ժողովուրդը:

Խաղաղ ժամանակ նորմանների պարապմունքն էր՝ որսորդութիւն, ձկնորսութիւն, խաշնարածութիւն և մասամբ էլ երկրագործութիւն: Միայն բնական է,

*) Բառերէց՝ nord — հիւսիս և mann — մարդ:

որ ծովի չափազանց մօտիկութիւնը զարթեցնէր նրանց մէջ անվեհերութեան ոգի՝ ընդունակ դարձնելով նրանց աւելի վստահ և գործօն լինելու: Իսկ սկալդները — ժողովրդական երգիչները՝ աշուղներին ոգի ու եռանդ ներշնչող խրախուսիչ երգերն ի հարկէ որ պիտի ազդէին մատաղ սերնդին և ոգևորէին նրան նույնպիսի քաջագործութիւններ անելու ծովի վրայ: Եւ ահա, մէկէլ տեսար, իսկույն պատրաստում էին իրանց արագասահ և թեթեւութեամբ նաւերը, սպառազինում անվեհեր մարդերով և ճամբայ ընկնում. ալգժամանակ վայր եկել տարել էր այն օտարերկրացիներին, որոնց աշխարհին մօտենար այդ ահեղ տորմիդը:

Բայց նրանք հասարակ ծովահէններ չէին, որոնց պարապմունքը լոկ ուրիշների բարիքը յափշտակելուն է կախնում. ոչ. նրանք քաջամարտիկ կտրիճներ էին, որոնց փափազն էր՝ մի կերպով անպատճառ ցոյց տալ իրանց հսկայական ուժը, երևան հանել իրանց երիտասարդական կտրրճութիւնը: Ուրեմն հասկանալի է, որ հարաւայինների համար այդ կտրիճներն ուրիշ բան չէին, եթէ ոչ թշնամիներ և աւազակներ: Սակայն նորմաններն իրանք ամենւին թշնամու երկիր չէին համարում հարաւային այդ բարեբեր երկիրները, այլմիայն իրանց փափագած պատերազմական փառքի մրցարան:

Նորմանները կապուած էին լինում իրար հետ ամենասերտ բարեկամական կապերով և անխարդախ հաւատարմութիւնով: Ընդհանուր գործի համար, առանց երկար ու բարակ մտածելու՝ նրանք պատրաստ էին արիւն թափել, անտրտունջ զահել իրանց կեանքը: Իսկ երբ պանդըխտութիւնից վերադառնում էին և կրկին մտնում իրանց հայրենական յարկի տակ՝ նրանցից ամենմիւսն առաջուայ նման դառնում էր խաղաղ քաղաքացի, ընտանիքի բարի հայր:

Նորմանների երկիրը բաժանուած էր միջանի փոքրիկ, միմեանցից անկախ տէրութիւնների: Ազդարնակութեան նշանաւոր մասը բօնդեր — ազատ շինականներ էին, որոնց պարապմունքը երկրագործութիւնն էր. զրանք էին ընտրում կոնսլանդին — թագաւորին, տինգին — ազգային ժողովին մէջ:

Ինչպէսոր հին ժամանակ մեր աւագ հայ նախարարներն ունէին իրանց շուրջը սեպուհ կամ կրտսեր նախարարներ, այնպէս էլ նորման-թագաւորներն ունէին իրանց անձնապահ կոչուած եարլեր — կոմսեր: Արքայական պալատի շքեղ խնձոյքների միջոցին սրանց մօտ էլ շատ յարգի էր ժողովրդական երգիչների և աշուղների անոյշ երգն ու տաղը:

Հայերիս մէջ եղած և մինչի օրս էլ գոյութիւն ունեցող սովորութիւնից, այն է՝ երկու հոգի իրարու հետ մինչի մահ ախպերացեղ դառնալը — եղբայրական սուրբ կապով միանալը՝ նրանք ևս ունէին, որի զանազանութիւնը միայն ծիսակատարութեան մէջ է: Մենք՝ որպէս քրիստոնեաներ, երբ կամենում ենք մէկի հետ եղբայր մնալ մինչի մահ, ս. պատարագին միմեանց ողջուն ենք տալիս և չետոյ գլուխգլխի դնելով՝ խնդրում ենք քահանային՝ որ աւետարան կարգայ գլխներին, — թէ և մեր փոքրերը բաւականանում են միայն իրանց գլխից միմի մագ պոկելով, որոնց փաթաթում են իրար հետ, ճանապարհից դուրս գետինը փոս անում ղցում մէջը, հոգով ծածկում և մի քար էլ դնում վրան այն յոյսով, որ ինչպէս իրանց երկու մագն այնտեղ ապահով և անբաժան են մնալու, այնպէսլ իրանց եղբայրութիւնը կրմնայ մինչի մահ անբաժան. սովորութիւն, որ անշուշտ հեթանոսութիւնից պէտք է մնացած լինի, — իսկ նորմանները՝ որպէս կռապաշտ և խիստ հաւատարիմ հեթանոսական

հին սովորութեան, այդ խորհրդաւոր ըուպէին ծակում էին իրանց բուռը և նրանից վազած արիւնը կաթեցնում առաջուց զետնում պատրաստած մի ընդհանուր փոսի մէջ:

Նորմաններն աստուածների հայր էին ընդունում ամենիմաստուն Օդինին՝ սկզբնապատճառին՝ նրանց կարծիքով, հոգեղէն զօրութեան, իսկ շանթընկէց Թորին՝ մարմնական զօրութեան: Միայն նրանց ամենասիրելին Օդինի որդի Բալդուրն էր — բարութեան և լուսի աստուածը, որ գեղեցիկ էր թէ՛ հոգով և՛ թէ՛ մարմնով: Ի պատիւ նրա կառուցանում էին ամենաշքեղ մեհեաններ և առատօրէն զոհաբերութիւններ մատուցանում: Բարի ոգիների՝ չարերի վրայ տանելիք վերջնական յաղթանակը, այդ խորիմաստ և միեւնոյն ժամանակ մանկական պարզամիտ հաւատը՝ որ առաջնորդում էր նորմաններին ամեն գործերի մէջ, թափանցում է նաև նրանց ժողովրդական բոլոր վիպասանութիւնները՝ լուսաւորելով նրանց իր խորհրդաւոր-կախարհիչ լուսով:

Սկանդինաւական վիպասանութիւնները՝ «սագանները» պահպանուած են միայն հեռաւոր Իսլանդիա կղզում. դրանք գրուած են մեզանից 800 տարի առաջ և կոչվում են Էդդեր: Իսկ բոլոր սագաններից ամենից աւելի բանաստեղծականը «Փրիտեօֆսագան» է, որ առաջին անգամ գրուել է Իսլանդիայում XIII-րդ դարի վերջերին կամ XIV-րդի սկզբներին: Այդ վիպասանութեան հերոս Փրիտեօֆն *) ապրում էր՝ գիտնականների ենթադրութիւնով, XII-րդ դարի վերջերին կամ XIII-րդի սկզբներին:

Այդ բանաստեղծական գրուածքը, որ մի ընդարձակ աշխատութիւն է, մենք առաջ կրբերենք նրա համառօտ բովանդակութիւնը միայն:

*) Իսլանդական երկու բառերից՝ frid — խաղաղութիւն և thiofr — աւազակ:

ՓՐԻՏԵՕՓ ԵՒ ԻՆԳԵՐՈՐԿԱ



դատ շինական Գիւղինգի
հողի վրայ՝ իրար կշտի, բուսել
էին մի ծառիկ ու մի ծաղիկ—
փոքրիկ վայելչահասակ կաղ-
նի ու քնքշիկ վարդենի: Փրիտ-
եօֆն էր այդ կաղնին, վար-
դենիկն՝ Ինգէրօրգան:

Ինչքան ուրախացաւ Փրի-
տեօֆը, երբ սովորեց սկանդի-
նաւական հին նշանադրերը, որովհետեւ միեւնոյնը նա
պիտի կարողանար սովորեցնել նաեւ Ինգէրօրգային:
Քանի՞ն քաղցրն էր Փրիտեօֆի համար, երբ առա-
գաստները պարզած՝ Ինգէրօրգայի հետ սլանում էր ջրի
երեսին: Ինգէրօրգան նաւակի ամեն մի շրջադարձին հըր-
ճովում էր ու ծափ էր տալիս:

Փրիտեօֆը նրա համար թռչնի բներ էր վերբե-
րում հինաւուրց ծառերի վրայից, և անմատչելի ժայ-
ռերի ծերպերից՝ կենդանի արծուիկներ: Նոր աչքն ըն-
կած ելակը, նոր հեղի դառած ցորնի հասկը՝ առաջին
անգամը նա պիտի բերէր Ինգէրօրգային — իր ընկերուհուն:

Թէ կատաղի հեղեղն էր կտրում նրանց ճանապարհը, Փրի-



Փրիտեօֆ և Ինգէրօրգա:

տեօֆն իսկոյն իր գիրկն էր առնում Ինգէրօրգային, նրա

սիրուն և փափիկ թևերը փարում իր վզովն ու ծիծաղելով անցկացնում հեղեղատից:

Բայց գլորուեց անցաւ մանկութիւնը—տղան դարձաւ երիտասարդ, աճիկը՝ աղջիկ: Ֆրիտեօֆն ամբողջ օրերով թափառում էր խիտ անտառներում. նա արջի վրայ էր գնում առանց նիզակի, առանց թրի, և մենմենակ՝ ամենհի գաղանի հետ այնքան էր կռվում՝ կուրծք-կրծքի տուած, որ վերջապէս յաղթում էր: Վիրաւոր վերադառնում էր տուն արիւնաշաղաղ զրոյով և լուռ ու մունջ գնում առ ոտս Ինգէբորգայի: Ինգէբորգան էլ նրա համար հին փառաւոր երգեր էր ասում և գորգի դործուածքում ճարտարութիւնով նրա համարձակ կռուի պատկերը դուրս բերում:

Սակայն ուլքեր էին արդեօք դրանք՝ այդ շինական սանիկները:

Ինգէբորգան Բէլ թագաւորի հարազատ աղջիկն էր, իսկ Ֆրիտեօֆը՝ աղատ շինական, թագաւորի ամենամօտ խորհրդատու և զինակից Թորստէն Վիկինգսոնի որդին:

Ծերունի Գիլգինգը՝ որ յայտնի էր ամբողջ թագաւորութեան մէջ իր ազնւութիւնով և իմաստութիւնով, ամենից լաւ կարող էր դատարարակել ինչպէս թագաւորի աղջկան, այնպէս էլ՝ շինականի որդուն. դրա համար էլ երկու անբաժան բարեկամներ—թագաւորն ու շինականը՝ նրա փորձառութեանը հաւատացին իրանց երկու անբաժան զաւակներին:



Բ

ՀԱՅՐԵՐԻ ՄՈՂՏ



երացաւ Բէլը. ծերացաւ նաև նրա բարեկամ Թորստէնը: Նրանք զգալով մահուան մօտենալը՝ կանչեցին իրանց զաւակներին: Բէլը երկու տղայուն էր. մինի անունը Գէլք, իսկ միւսինը՝ Գալֆտան: Թէև շիկահեր Գէլգն աստուածների ջերմեռանդ քուրմն էր, սակայն նենգ էր հոգով և բնաւորութիւնով էլ քսու: Իսկ խարտեաշ Գալֆտանը՝ ընդհակառակը, չափից դուրս մեղմ բնաւորութեան տէր էր ու թեթեամիտ. միշտ էլ զրահ էր հագնում և թուր կրում, սակայն տեսնողը կասէր՝ զինուորականի զգեստ հագած մի օրիորդ է սա:

—Որդիք, ասաց նրանց Բէլը, ես արդէն ծերացել եմ. ինձանից յետոյ դուք պիտի կառավարէք երկիրը, միայն կառավարեցէք եղբայրական համաձայնութիւնով. դրացի երկիրները հետ հաշտ ապրեցէք և միայն այնժամանակ սուր վերցրէք, երբ հարկաւոր կրլինի ձեր հայրենիքը պաշտպանել: Չճշէք ժողովրդին, ու միշտ էլ արդար դատաստան կտրեցէք: Գու՛ իմ որդի Գէլք, խիստ չլինիս. գիտցած եղիր, որ թուրը՝ որչափ սուր լինի, այնքան աւելի հեշտութիւնով կրծուի: Իսկ դու՛ Գալֆտան որդիս, դատարկ զբաղմունքներից ձեռք վերցրու, ամօթ է. ճիշտ է՝ քաղցուն անուշ է, բայց արբեցնող է:

Հէնցոր թագաւորը խօսքն աւարտեց, իսկոյն տեղից վերկացաւ նրա հաւատարիմ բարեկամ Թորստէնը:

—Ո՛վ թագաւոր, ասաց նա, մենք մեր ամբողջ կեանքում ձեռքձեռքի տուած ապրեցինք. ուրեմն այժմ—

ևս թող տուր, որ միասին մեռնենք:

Եւ յետոյ զիմելով իր որդի Փրիտեօֆին՝ յորդորեց նրան փառքի հետամտել, բայց երբէք չհպարտանալ, վախենալ աստուածներէց և յարգել երկրի արդար իշխանութիւնը: Ծերերի նախազգացմունքն իրանց չխաբեց. կարճ միջոցից յետոյ երկուսն էլ մեռան: Նրանց մարմինն ամփոփեցին իրանց հայրական գերեզմանատներում, որոնք գտանվում էին հայրենի ծովածոցի երկու կողմերին՝ բարձր բլրակի տակ: Գէլզն ու Գալֆտան եղբայրներն իրանց հօր գահը բարձրացան. Փրիտեօֆը ժառանգեց իր հօր կալուածքը՝ ընդարձակ մարգագետիններ ու դաշտեր, անթիւ հօտեր և «երկու անգամ տասներկու» ձի: Բայց այդ բոլոր հարստութիւնից նրա համար ամենից թանկագինն իր հօրից մնացած երեք բաներն էին՝ Սնգուր վագր էլ անունով հաւուսնի թուրը, կազ Վանուսն զի՛ այդ հիւսիսային Հեփեստոսի՝ ձեռքով կռած ապարանջանը և վիշապապիւնի ու ձկան թեփերի նման ծածկուած արծաթեայ տոտով Էլլիդան՝ կախարդական նաւը: Փրիտեօֆի անունը հռչակուեց ամբողջ թագաւորութեան մէջ. և այդ ոչ այնքան նրա անթիւ հարստութեան, որքան իր ազնիւ հոգու տէր լինելու համար, որ նա ժառանգել էր իր հօրից: Նա քաջ էր, բայց ռիսակալ չէր, մեծահոգի էր և առատաձեռն: Նա իրան շրջապատեց տասներկու իմաստուն խորհրդականներով, որոնք սպիտակահեր զօրականներ էին և բոլորն էլ իր հանդուցեալ հօր զինակիցները եղած: Այդ ձերուհիների հետ, «ինչպէս թառամած տերեւների մէջ մի վարդ», նստում էր միայն իր հասակակից ու զինակից երիտաւոր Բէօրնը *), որի հետ՝ ըստ նորմանական սովորութեան, արիւնտով էին կնքել իրանց եղբայրութիւնը:

*) Բէօրն (Björn)՝ չվեղերէն նշանակում է աւ ք:



ՓՐԻՏԵՕՓԻ ՀԱՐՍՆԱԽՍՈՒԹԻՒՆԸ

էֆ էր անում Փրիտեօֆն իր քաջասիրտ ընկերների հետ: Աշուղները նրա պապերի գովեստն էին երգում. բայց նա լուռ էր և տխուր:

—Այս ինչ է պատահել մեր երիտաւոր արծուին, հարցնում էր նրա ընկեր Բէօրնը. արդեօք կրճքից է վերք ստացել, թէ՛ թւին են խփել: Պակաս բան չկայ, ամեն ինչ առատ՝ թէ՛ քաղցու, թէ՛ ճարպ *), երգիչները բազմաթիւ, երգերն էլ անվերջ: Երեվարը գոփում է գետինը, բաղէն որսի է հրաւիրում, Էլլիդան էլ պոկվում է իր խարսխից. բայց մեր Փրիտեօֆը՝ նա ծարաւի չէ ոչ պատերազմի, ոչ էլ աւարի: Չոր յարդի վրայ անփառք մահն է սպասում նրան:

Սակայն Փրիտեօֆն այդ կատակներից և ոչմէկին պատասխանեց: Նա տանից դուրս եկաւ գնաց ծովափ, քանդեց Էլլիդան և կապը, պարզեց առաքատներն ու սլացաւ ալիքների վրայով:

Այդ միջևնոյն պահուն թագաւոր-եղբայրները նստած այն բլրակի վրայ, որի տակին իրանց հայրական գերեզմանատունն էր, զանազան վճիռներ էին տալիս: Մէկէլ յանկարծ Փրիտեօֆն եկաւ կանգնեց նրանց առաջ և այս համարձակ խօսքերով զիմեց թագաւոր-եղբայրներին.

*) Հին սկանդինաւեցե զործ էին ածում՝ իբրեւ սերելի կերակուր, խոզի, ձկան և այլ կենդանու ճարպ: Ծան. Թարգմ.

«Ես թագաւորական ցեղից չեմ, և ոչէլ եարլ եմ. բայց պապերիս զերեզմաններն իրանց փառաւոր գործերի վկաներն են, և քանիոր ժողովրդական երգիչները կրկնին՝ նրանց լիշատակը միշտ անմոռանալի կըմնայ: Ես կարող էի, եթէմիայն ուզենայի, ինձ Համար թագաւորութիւն ձեռք բերել, բայց ինձ Համար աւելի ցանկալի է մնալ իմ հայրական յարկի տակ, ինձ Համար աւելի սիրելի է պաշտպանել իմ թագաւորներին՝ իմ եղբայրներն: Մենք կանգնած ենք հանգուցեալ Բէլի բլրակի վրայ. նա լուսմ է մեր ամեն մի խօսքը: Իզուր չէր, որ ինձ ու Ինգէթորգային միասին դաստիարակել տուեց: Զուտալ ծառիկներն նման մենք աճեցինք մէկ հատիկ սրտով: Կատարեցէք նրա գաղտնի կամքը—տուէք ինձ ձեր քօյրը, տուէք ինձ Ինգէթորգային»:

Չատ կարելի է բարեսիրտ Գալֆտանը՝ զիջանելով նրա թախանձագին խնդիրքին, համաձայնուէր քօյրը Փրիտեօֆին կնութեան տալու, միայն գոռոզ Գէլգն արհամարանքով մերժեց նրան:

—Ի՞նչպէս, բացականչեց նա. քեզ՝ շինականի որդուդ տանք մեր քօյրն ու արքայադուստրը: Եղիւր դուք զասակարգի մէջ առաջինը, բայց Ինգէթորգան քեզանից այնքան հեռի է, ինչպէս՝ երկնքի աստղերը: Իսկ քո պաշտպանութիւնը մեզ չէ հարկաւոր, մենք ինքներս էլ կարող ենք պաշտպանել մեզ:

Սակայն առիթը շուտով ստիպեց Գէլգին զղջալու իր պատճ խօսքերի համար, բայց արդէն ուշ էր:



ատ թագաւորութիւններ կային Նորմանդիայում, բայց ոչմէկի ժողովուրդն այնպէս զօրեղ և երջանիկ չէր, ինչպէս որ էին իմաստուն և բարի Ռինգ թագաւորի հպատակները: Ժողովուրդը բարօրութեան մէջ էր. իսկ ինքը Ռինգ թագաւորը վաղուց էր չզիտէր թէ ի՞նչ ասել է ուրախութիւն, ի՞նչ ասել է հանգստութիւն: Երեսուն տարի շարունակ նա ապրել էր իր սիրեցեալ ամուսնու հետ, որի մահից յետոյ նրա համար անտանելի էր միայնակութիւնը:

Բէլ թագաւորի աղջիկ Ինգէթորգայն զեղեցկութեան համբաւը նրա ականջին էլ էր հասել, ուստի և թանկագին ընծաներով հարսնախօսներ ուղարկեց Ինգէթորգայի մօտ:

Ինգէթորգայն եղբայրները՝ շատ լաւ իմանալով թէ ի՞նչ զօրութեան տէր է Ռինգ թագաւորը, չհամարձակուեցան բացասելու: Բայց և այնպէս հարկաւոր էր իմանալ նաև աստուածների կամքը:

Սրբազան ծառաստանում նրանք ձիերից և բաղէ-
ներից հարուստ զոհ մատուցին: Զոհը մերժուեց, և Պէլզը՝
առանց այլևս երկար մտածելու, բացասեց հարսնախօսնե-
րին: Եւ այդ բաւական չհամարելով՝ ճանապարհ դնելիս
էլ ծիծաղեց նրանց վրայ:

— Ախո՛ս, ասաց նա, որ ձեր ծերուկ թագաւորն այս-
տեղ չի, ես նրա երիվարը կրբունէի, որ վայր չընկնէր
ու մի տեղը վնասէր:

Ծերունի թագաւորը կրակ կտրուեց՝ իր խնդիրքը
մերժելու համար, և առաւել ևս նրա համար, որ չարմտա-
բար ծաղրել էին իրան: Ուստի նա մեծ պատրաստութիւն
տեսաւ և ստուար զօրախմբով պատերազմ գնաց իրան
անպատուողների վրայ:



30
100
1000
40342



ՓՐԻՏԵՕՓԸ ՀԱՆՄԱՏ ԽԱՂԱԼԻՍ

ազաւոր Պէլզը կուարար էր, բայց
ամենեւին քաջութիւն չունէր: Նա
միայն այժմ մտաբերեց թէ ինքը կրո-
ւած * էր իրանց առաջին զիւցազն
Փրիտեօֆի հետ, որ միւսնոյն էր թէ
նրա բոլոր կտրիճ խմբի հետ: Այժմ
նի կը պաշտպանէ իրան ահեղ Ռինգ թագաւորից:

Ծերունի Պիլզինդին նա միջնորդ ուղարկեց Փրիտեօֆի
մօտ: Դաստիարակիչը գտաւ նրան Բէօրնի հետ շախմատ
խաղալիս:

— Բէլի որդիքը քեզ ողջունում են, սկսեց Պիլզինդը.
Ռինգ թագաւորը պատերազմի է գալիս նրանց վրայ, իսկ
նրանց բոլոր յօսը քեզ վրայ է:

Փրիտեօֆը՝ իբրթէ ոչինչ չի լսում, սկսեց Բէօրնի
հետ շախմատի մասին խօսակցութիւնը շարունակել:

— Բէօրն, զգո՛յշ եղիր, թագաւորիդ բանը բուրդ է.
նրա բոլոր յօսը հետ և ա կ ի *) վրայ է:

— Կատակ մի անիր նրանց հետ, համոզում էր Պիլզինդը.
իրաւ է՝ նրանք Ռինգից շատ են թույլ, բայց դու էլ զօրեղ չես:


— Բէօրն, դու ուզում ես իմ բերդն առնել. կը-
ներես, քո բանը չէ, իմ հետեւիները կը պաշտպանեն նրան:

— Եւ միթէ դու գոնէ Ինգէբորգային չես խղճում, որ
անմխիթար արտասուք է թափում, պնդում էր Պիլզինդը:

— Ի՛, Բէօրն, թագուհուս մասին դու անհանգիստ
մի՛ լինիր. իմ բոլոր ոյժս նրանում է կայանում, և ո՛չ մի
բան մեզ իրարուց բաժանել չի կարող:

Այսպէս անորոշ և խորհրդաւոր պատասխաններով
վշտացած՝ Պիլզինդը վերադարձաւ իր թագաւորների մօտ:

*) Բառախաղութիւն է. լսօքս՝ bond — շվեդերէն նշանակում է՝
և՛ հետեւա կ, և՛ շինա կան:



ՓՐԻՏԵՕՓԻՆ ՀԵՌԱՅՆԵԼԸ



Եղիլ էր ասում Գիլ-
դինգը: Այդ ժամանակ
Փրիտեօֆի թագուհի Ին-
գեբորգան՝ հեռու իր հայրա-
կան տանից, անշատուած հարազատներից, անմխիթար սուգ
էր անում Ֆալգուրսհագի լուսափայլ Բալդուր
աստծու մեհեանում, ուր թաքցրել էր նրան իր նախնի-
ներով նրա եղբայր Գէլգը, որպէսզի Ռինգը չկարողանայ
գտնել նրան: Այդ մեհեանին միանգամ նուիրուած սղջ-
կերքն աչնուհետեւ ալլեւ իրաւունք չունէին մարդու երես
տեսնելու: Եւ ովոր այդ պատուէրի ընդդէմ գնար, նա
իր վրայ կըհրաւիրէր աստուածների սհեղ բարկութիւնը:

Բայց Գիլդինգի այցելութիւնից յետոյ հարկաւոր էր,
որ Փրիտեօֆն անպատճառ տեսնէր Ինգէբորգային: Թէ-
պէտեւ Բէօրնը շատ ասաց, որ չանէ այդ անգգուշութիւնը,
բայց չսեց. այլ պատրաստեց իր Էլլիգեան ու սլացաւ
դէպի Բալդուրսհագ:

Ինգէբորգան երբ նրան տեսաւ, սաստիկ վախեցաւ:
«Աստուածները քեզ ամենեւին չեն ներիլ այս բանը»,
եղան Ինգէբորգայի առաջին խօսքերը:

Փրիտեօֆի բոլոր աշխատանքը զուր անցաւ նրան
հանգստացնելու:

— Հէնց այս բոպէիս ետ դարձիր գնա, գէթ եղբայր-
ներիս հետ հաշտուիր, թախանձում էր նրան օրիորդը:

Պէտք էր Ինգէբորգայի ուզածը կատարել: Նա իսկույն
վերագարձաւ թագաւոր-եղբայրների մօտ, որոնք ինչպէսեւ
առաջ, իրանց հայրական գերեզմանատան բլրակի վրայ էին:

— Ինձ համար շատ դժուար է Ինգէբորգայի եղբայր-
ների հետ խռով մնալը, ասաց նա Գէլգին. պատրաստ
եմ հաշտուելու, պատրաստ եմ ձեզ օղնելու, միայն թէ
տուր ինձ Ինգէբորգային, որովհետեւ դու միայն այդ ճա-
նապարհով կարող կըլինիս Ռինգ թագաւորի ձեռքից ազա-
տել թէ նրան և թէ քո սեպհական թագը:

Այնտեղ հաւաքուած ամբոխը բոլորը միասին ի նշան
հաւանութեան դարկին վահաններին և միաձայն բացա-
կանչեցին.

«Տուր նրան Ինգէբորգային»:

Ամբոխի հետ միացան իրանց խնդիրքներով նաեւ ծե-
րունի Գիլդինգը և պատանի Գալֆտանը:

— Սրբութիւնն արատաւորոյն անարժան է աստուած-
ների աղջկան, ասաց Գէլգը, և դիմելով Փրիտեօֆին.

— Պատասխանիր. Բալդուրի մեհեանում դու Ինգէ-
բորգային տեսել ես, թէ ոչ:

— Դու միայն ասա «ոչ», վրաբերեց ամբոխը և մենք
ամենքս էլ կըհաւատանք քո խօսքին:

— Այժմ իմ մէկ հատ խօսքիցս է կախուած երջան-
կութիւնս, ասաց Փրիտեօֆը, բայց ես սուտ խօսել չեմ
կարող. ես չեմ ուզում այն երջանկութիւնը, որ ստոր խա-
բեբայութիւնով է ձեռք բերվում: Այո, մեհեանում ես

տեսնուել եմ քրոջդ հետ, բայց զըրանով չխանդարեցի
աստուածների խաղաղութիւնը . . .

Նա գեռ իր խօսքը չվերջացրած՝ սարսափանքի տրտունջ
անցաւ ամբողջի մէջ. ամենքն էլ երես զարձրին. նրանից
ինչպէս մի աւերիչ ժանտախտից: Փրիտեօֆի օդտին էլ ոչ մի
մարդ մէկ խօսք անգամ չասաց. իւրն արմատները գցած
սնահաւատութիւնը փակեց ամենքի շրթունքները:

— Նախորդներին օրէնքի համաձայն, կրկին խօսեց
Գէլգը, ես կարող էի քեզ ՚ի մահ դատապարտել հէնց այս
լուպէիս, կամ մշտապէս աքսորել, բայց ես ողորմած կը-
լինիմ դէպի քեզ: Հեռու արեւմտքում կղզիներ կան, որոնք
եարլ Անգանտիրի ձեռի տակն են: Իմ հայր Բէլի կենդա-
նութեան ժամանակ կանոնաւոր կերպով նա վճարում էր
իր տալիք հարկը, բայց այժմ այլևս չի վճարում: Նաւիր
գնա նրա մօտ և պահանջիր այդ հարկը: Իցէթէ գու զըրանով
կարողանաս քաւել յանցանքդ:

Փրիտեօֆը հնազանդուեց: Գնաց Ինգէրորդային մնաս-
բարով ասելու, և հօրից ժառանգութիւն մնացած թան-
կազին ապարանջանը նրան տալով՝ իր քաջարի խմբով
ճանապարհ ընկաւ:

Միայն նենգաւոր Գէլգի համար դեռ բաւական չէր,
որ հեռացրեց իր առելի մարդուն. ոչ. նրա փափագը՝
Փրիտեօֆին վերջնականապէս ՚ի կորուստ մատնելն էր: Իբրեւ
քուրմի նրան յայտնի լինելով բոլոր գաղտնի հմայութիւն-
ները, նա ալեկոծեց ծովը, ուղարկեց նրա վրայ կարկտա-
խառն ու ձիւնախառն սաստիկ ցուրտ: Ծովի անդնդից
էլ դուրս կանչեց զարհուրելի հրէշներ: Քայց շնորհիւ
Փրիտեօֆի՝ նաւավարութեան մէջ ունեցած փորձառու-
թեան և անվեհերութեան՝ նրա Էլլի դան կարող եղաւ
գիմադրել այդ բոլոր թշնամական փոթորիկներին, թէպէտև
զրկուեց առաջատաներից և ղեկից:



ՓՐԻՏԵՕՓՆ ԱՆԳԱՆՏԻՐԻ ՄՕՏ

արլ Անգանտիրը մեծ խնձուղ ու-
նէր. լուսամտի մօտ պահապան
էր կարգուած նրա հաւատարիմ
ծերունի Քալվարդը. սա՛ որ
արդէն այժեամի՛ մեղրաջրով լիք
եղջիւրը դատարկել և կաղդու-
րուել էր. իր սրտոնի աչքերը
չէր հեռացնում ծովի անհուն տարածութեան վրայից: Մէկ-
էլ յանկարծ ծովի վրայ մի քթանչելի միշտապանաւ երևաց:
Տեսքով սքանչելի, բայց նա այնպէս էր շարժւում, որ
կարծեսթէ՝ նրա վրայի բոլոր նաւորդները չափազանց
ընկճում և յողնած լինէին: Եւ ուղիղ որ, երբ նաւը մօտեցաւ
ափին, երկու յաղթանդամ հսկաներ՝ իրանց ընկերներին
գրկեցին ու ափը հանեցին: Յետոյ աւագի վրայ կրակ անելով՝
շուրջը նստոտեցին, որ միքիչ տաքանան և հանգստանան:
Սակայն Քալվարդը նրանց տեսնելուն պէս արդէն
վազել և իմացում էր տուել իր տիրոջը՝ անձանօթ եկող-
ների մասին: Անգանտիրը մօտենալով լուսամտին, նայեց
և իսկույն ճանաչեց հիւրերին:

— Այդ Փրիտեօֆի գեղեցիկ Էլլի դան է: Եւ հէնց
ինքը Փրիտեօֆն էլ այնտեղ է: Թէև իմ կեանքում ամենևին
չեմ տեսած նրան, բայց նրա թէ կերպարանքից և թէ կաղ-
մուածքից իսկույն երևում է, որ նա Թորստէնի որդին է:

— Այ, իսկույն կիմանանք, իրաւ նա Փրիտեօֆն է,
խօսեց այն կողմից եարլի Բերսէրկնէրից — թիկնապահ-

ներից մինը՝ կատաղի Ա տ լ ի ո ս ր : — Տղէրք, եկէք ինձ հետ:

Եւ այդ յանդուգն խումբն իսկոյն դուրս եկաւ պալատից՝ օգուժման ճամբով և շարժելով սրերն ու գաւազանները, և զիմեց զէպի ծովափ: Գեռ բաւականին հեռու էին որ՝ «Հաշտութիւն» խնդրէր, աղաղակեց Ատլիոսը Փրիտեօֆին:

— Ես սաստիկ յոգնած եմ այժմ, խիստ պատասխանեց Փրիտեօֆը, բայց մինչև օրս դեռ ես ոչոքից հաշտութիւն չեմ խնդրած, և ուրեմն՝ քեզանից էլ չեմ խնդրիլ:

Եւ այս ասելն ու միմեանց վրայ լարձակուիլը մին արին: Մահացու հարուածները կարկտի պէս էին թափում իրար վրայ: Երկսի զրահներն էլ ջարդուիշուր եղան. իսկ Ատլիոսի թուրը միջից երկու կէս եղաւ Փրիտեօֆի Ա ն գ ու ը վ ա գ է լ հ աւ լ ու ն ի թրի մի հաշուածով:

— Անդէսներին ես չեմ սպանում, — ասաց Փրիտեօֆն ու թուրը գէնդցեց, — այժմ արի մեր ոյժերը փորձենք:

Հիմա էլ գօտեմարտութիւնը տաքացաւ. նրանք կուրծքկրծքի եկած այնպէս կիպ էին բռնել իրար, որ թուում էր թէ նրանց երկսի պողպատէ զրահները մինն է: Գետինը փորփորուեց նրանց ոտների տակին, թփերը հաւասարուեցան. իսկ գօտեմարտների ընկերները՝ սգմիայն տեղից շարժուել, այլ շունչ քաշել անգամ չէին համարձակվում: Վերջապէս Փրիտեօֆը տափովը տուեց Ատլիոսին, և ծունկը գնելով նրա կրծքի վրայ՝ ասաց.

— Ափսոս, որ թուրս այժմ ձեռքիս չէ, որ միանգամից հաշիւս վերջացնէի քեզ հետ:

— Գնա բեր թուրդ, ես տեղիցս չեմ շարժուիլ, պատասխանեց Ատլիոսը գոռոգաբար. չէ որ մեզ երկսիս վիճակուած է Վալհալլայում *) լինել. միայն ես այսօր կըլինիմ, իսկ դու, կարելի է՝ վաղը:

*) Երկնքում՝ 500 սայլադուռն և 50 դուռն ունեցող մեծ և գեղեցիկ քաղաք, ուր հսկաներն էին բնակվում: Ե. Փ.

Եւ իրաւոր նա չշարժուեց տեղից, մինչև Փրիտեօֆը գնաց և բերեց իր գէնդցած թուրը: Այսպիսի աներկիւղութիւնը զինաթափ արաւ մեր հերոսին. նա ձեռքը պարզեց զէպի իր հակառակորդը:

Այդ ժամանակ ծերունի Գալվարդը մօտեցաւ յաղթողին և իր տիրոջ կողմից խնձույքի հրաւիրեց: Փրիտեօֆն ընդունեց հրաւերը և գնաց իր ընկերներով: Անգանտիրը իջնելով իր արծաթէ գահից՝ երիտասարդ հիւրին դիմաւորեց, բռնեց նրա ձեռքից և նստեցրեց իր կողքին, ասելով.

— Այստեղ շատ անգամ եսք ուրախացել քո հանգուցեալ հայր թորստէն Վիկինգսոնի հետ, որ իմ ամենալաւ բարեկամն էր: Այժմ թող իր որդին բռնէ նրա տեղը:

Եւ «սիցիլիայի» պծպծան ընտիր զինուց բաժակը լցնելով՝ հանգուցեալի ողորմաթափը խմեց: Այն ժամանակ Փրիտեօֆը յայտնեց նրան իր գալու նպատակը:

— Ես երբէք հարկ չեմ վճարել, և չեմ էլ վճարիլ, բացականչեց եարլը. բայց քեզ՝ բարեկամիս որդուն, ես կըվարձատրեմ, ինչպէս որ իմ սիրտը կուզի:

Եւ նա ձեռքով նշան արաւ իր փոքրիկ աղջկան, որ վաղէվաղ գնաց և իսկոյն վերադարձաւ գեղին ոսկիներով լի քսակը ձեռքին:

— Վերառ այս քսակը, ասաց Փրիտեօֆին եարլը, և ինչոր ուզում ես արա՛: Բայց խօսք տուր մինչև դարուն ինձ մօտ հիւր մնալ:

Փրիտեօֆը խօսք տուեց և մինչև վերջը խօսքին տէր մնաց, մտքովն անգամ չանցկացնելով թէ իրան ինչ էր սպասում տանը:



ՓՐԻՏԵՓԻ ՎԵՐԱԴԱՐՁ

արունն եկաւ և Փրիտեֆն աչի
իր պատրաստութիւնները տես-
նելով՝ ճանապարհ ընկաւ: Եօթն
օր, եօթը գիշեր նաւելուց յետոյ
վերջապէս նա կրկին տեսաւ իր
հայրենի ծովեզրը: Քայց նա նա-
յում է, նայում է և չի հաւատում
իր աչքերին. հայրենական շքեղ
և հոյակապ ապարանքների փոխարէն միայն քարերի կոյ-
տեր ու մոխիր է թափուած, որոնց միջից միայն սևացած
ծխնեւոյդներն են երևում:

Յամաք դուրս եկաւ և տխուր ու տրտում անցաւ
մոխրակոյտի վրայից: Նրա հին ընկեր բրդոգ շունը՝ որի
հետ միշտ որսի էր գնում արջերի վրայ, ուրախ հաջողով մօտ
վազեց և նրա ոտներին փաթաթուեց: Ղնորհաւորական
խրինջոցով նոյնպէս վազեց եկաւ իր սպիտակ երիվարը և
փաղաքշանքով դռնէր մօտեցրեց տիրոջը՝ յոյս ունենալով
որ առաջուայ նման հացի պատառ կըստանայ: Բայց,
աւանդ խեղճ երիվար, քո տէրը քեզանից անքատ է. նա
քեզ ոչինչ չի կարող տալ:

Վերջապէս եկաւ նաև ծերունի Գիլգինգը և սկսեց
պատմել իր սանիկին՝ թէ ինչպէս Ռինգն իր քաջ զօրքով
ջարդեց Գէլգի զօրքին, թէ ինչպէս Գէլգը միայն փախ-
չելով կարողացաւ ազատուել, և բարկութիւնից կուրացած՝
որպէսզի Փրիտեֆից վրէժը լուծի, նրա ամբողջ ապա-

րանքը կրակել տուեց, թէ ինչպէս Ռինգը կրկին պահանջեց



Փրիտեֆի վերադարձը:

Ինդէբորգային իրան կին տալ, և թէ ինչպէս այս անգամ Գէլգը
չկարողանալով ընդդիմանալ իր քրոջը կնութեան տուեց նրան:

ընչա՞նք — Ահ, ինդէբորդա, — մորմոքած սրտով բացականչեց Փրիտեօֆը՝ ծերունու վերջին խօսքերը լսելով, — ուրեմն դու այդպէս պահեցիր քո ինձ տուած երդումը...:

— Ինդէբորդալին մի մեղադրիր, — ասաց Գիլգիմշը, — նա համարեա իրան կորցրել էր վշտից. բայց նա տանջվում էր լուռութունը ինչպէս սուգակ թռչուն, որ իր մահը ծովի ալիքների մէջ է որոնում: «Ես հոգով չափ ուրախ կըլինէի, եթէ հէնց այս րոպէիս մեռնէի. բայց Բալդուր աստծուն զոհ է հարկաւոր, թող ուրեմն այդ զոհը ես լինիմ», ասում էր ինձ խեղճ աղջիկը: Նա այնպէս մօտեցաւ սեղանին, որպէս թէ գոհելու էին իրան: Ես իջեցրի նրան ձիուց. նա մեռելի նման դժգոյն էր: Եւ այնպէս մատաղ օրիորդին պսակեցին ծերունի Ռինդի հետ: Ամենքն ևս արտասուք էին թափում. միայն նա էր, որ առանց մի կաթիլ անգամ արտասուք թափելու՝ աղօթում էր ջերմեռանդաւին: Այդմիջոցին Գէլգի աչքովն ընկաւ քո ապարանջանը, որ կրում էր ինդէբորդան իր թւի վրայ: Չիմանալով իր անելիքը, նա իսկոյն վրա-ընկաւ հանեց տուածդ ապարանջանը. քրոջ թւից և հագցրեց Բալդուրի կուռքի թւին: Այստեղ էլ չհամբերեցի՝ մերկացրի սուրբ. բայց ինդէբորդան արգելեց ինձ: «Թող շշնջեց նա, թող տուր, որ աստուածներն իրանք անեն մեր գատաստանը»...

— Այո, — ընդհատեց պատմողին Փրիտեօֆը, — այդ գատաստանը մօտիկ է, և հէնց այսօր կըկատարուի այդ գատաստանը:



ՓՐԻՏԵՕՖԻ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ



Էսգիշեր էր, բայց ամռան, բեռնային կէսգիշեր: Սարերի զագաթները՝ մի րոպէ անգամ չմայրմտնող արեգի ծիրանեգոյն լուսով փայլում շողշողում էին: Բալդուրի մեհեանում սրբազան խորհուրդ էր կատարվում: Գէլգ թագաւորը՝ որպէս քրմապետ զոհ էր մատուցանում աստուածներին:

Մէկէլ մեհեանը շրջապատող սրբազան ծառաստանը լանկարձ կենդանացաւ, լսուեց սրերի շառաչիւն և նրա հետ էլ մի սպառնալից ձայն.

— Բէօրն, կանգնիր դռների առաջ և ոչոքի չթողնես դուրս գալու մեհեանից: Իսկ ովոր կըհամարձակուի գօռով դուրս գալու փորձն անել, նրա կարկաժը ջարդիր:

Գէլգի գոյնը թռաւ և տեղնուտեղը մնաց սառած կանգնած: Այդ Փրիտեօֆի ահեղ ձայնն էր: Ահա և սպառնալից վրէժխնդրոյն ինքն արդէն կանգնած է շեմքում:

— Դու ուղարկեցիր ինձ հարկը բերելու. ահա, վերառ ուրեմն. իսկ յետոյ ազնիւ կուռով կըտեսնենք մենք մեր հաշիւը...

Ասաց և ոսկիներով լի քսակը թագաւորի երեսովը տուեց: Գէլգի երեսն արիւնլուաչ եղաւ և նա մեռելի նման ընկաւ սեղանի առաջ:

— Դու մինչև անգամ քո սեպհական ոսկիներդ չկարողացար տանել, — արհամարհանքով ասաց Փրիտեօֆը, — ամօթ էլ կըլինէր, որ իմ սուրբ քո արիւնով թաթախուէր...

Դեռ խօսքը չաւարտած, երբ նկատեց իր ուխտա-
ղրութեան ապարանջանը՝ որ ինքն Ինգէբորգային էր ըն-
ծայել մի ժամանակ, կուռքի բազկին հաղցրած՝ նրա աչ-
քերը շաղուեց, մոռացաւ ամեն ինչ. նա այնպէս ուժգին
քաշեց ապարանջանը, որ փայտից շինած կուռքը երեսի
վրայ գայով ուղիղ ընկաւ իր առաջը վառուղ սրբազան
բոցերի մէջ: Մի ականթարթում կրակը լափեց նրան, և
բորբոքուելով՝ բարձրացաւ գէպի մեհեանի առաստաղը.
Փրիտեօֆն այժմ միայն ուշքի եկաւ:

— Բացէք դռները, թողէք բոլորին էլ, ձայն տուեց
նա իր հաւատարիմ ընկերներին:

Դուռը բացուելուն պէս՝ մեհեանում բանտարկուած
քրմերն իսկոյն դուրս վազեցին. իսկ անդգալ ընկած Գէլ-
գին զրկած դուրս տարան:

— Զննտ, ջուր հասցրէք, շարունակեց Փրիտեօֆը,
ամբողջ ծովը դէսն արէք. կամարների վրայ ջուր սրսկեցէք:

Մեհեանի ու ծովի մէջ եղած տարածութեան վրայ՝
մարդերից մի կենդանի չգլխաց գոյացաւ: Զուրը ձեռքից
ձեռք անցնելով վերջապէս թշշալով ածվում էր կրակի
վրայ:

Սակայն բոլոր աշխատանքը դուր եղաւ. նոյն պահուն
փչող քամին հետզհետէ աւելի և աւելի էր ոյժ տալիս
հրդեհին. և լուսաղէմին՝ մեհեանից և նրան շրջապա-
տող սրբազան ծառաստանից միայն մոխիր մնաց, որից
դեռ ծուխ էր բարձրանում: Բայց Փրիտեօֆի վրէժն
իր վրայ թափուեց. հայրենի աստուածները շուռ տուին
նրանից իրանց լուսափայլ երեսները: Եւ Փրիտեօֆն ար-
տասուքն աչքերին՝ ընկերների հետ գնաց նստեց իր էլ-
լի գայի վրայ: Նրա համար այլևս տեղ չկար հայ-
րենի երկրում. նա մեհեանի գայլ եղաւ, նա դարձաւ
վիկինգ — ծովահէն, անտեղ, անտուն թափառական:



ՓՐԻՏԵՕՓԸ ՌԻՆԴԻ ԹԵԳԱՆՈՐԻ ՄՈՏ.

արին գլորվում էր տարու ետեւից, բայց
Փրիտեօֆը դեռ ևս թափառում էր ալիք-
ների վրայ, ահ ու սարսափի մէջ ձգե-
լով բոլոր ծովեզրեայ երկիրները՝ Նորդ-
լանդիայից սկսած մինչև Ֆունստտան:

Սովորաբար իր մօտը հայեացքը չառած մութ յոր-
ձանքի վրայ՝ նա լուռ կառավարում էր ղեկը: Բայց պատե-
րազմի միջոցին նրա հոգին կրկին թւաւորվում էր, ձա-
կատի խորշումներն անյայտանում էին, աչքերը փայլում
էին կայծակի նման, իսկ ձայնը՝ շանթընկեց Թոր աստծու
ձայնի պէս որոտում էր:

Իսկ այդ ժամանակ Ռինդ թագաւորն իր երիտասարդ
Ինգէբորգա կնոջ հետ ապրում էր խաղաղ և անդորր: Ինչ-
պէս «աշնան մօտ դարուն»՝ Ինգէբորգան Ռինդի մօտ նըս-
տած էր լինում նրա ուրախ խնձոյքների միջոցին:

Բայց ահա մի անգամ ներս է մտնում նրանց մօտ
մի անկոջ հիւր — ոտից մինչև գլուխը արջի մորթում մտած
մի ինչոր ծերունի: Թէև նա իր աղքատութեան գաւա-
զանի վրայ չենուած էր ման գալիս, բայց էլի ամբողջ
գլխով բարձր էր միւսներից: Ինչպէս որ աղքատը
անում է՝ նա նստեց դռների մօտ դրած երկայն նստա-
րանի ծայրին: Միայն նրա բրդոդ հագուստն այնպէս հե-
տաքքեր էր, որ պալատականները ծաղրածութիւնով
սկսեցին զիտել նրան և մատով ևս ցոյց տալ: Այդ վար-
մունքից անձանթի աչքերը փայլատակեցին: Բոլորովին
անսպասելի՝ նա բռնեց հէնց առաջին պատահող կտրճի
օճիքից և փառաւոր կերպով զետիւն տապալեց: Մի ակըն-

Թարթում ամենքն էլ սքլեցին, իսկ Ռինգ Թագաւորը բարկացած ձայնեց եկողին.

— Ի՞նչ մարդ ես դու, որտեղից և ինչո՞ւ համար ես եկել այստեղ:

— Այդ դժուար հարցեր են, — աւագ ծերունին, — բայց եթէ ուզում ես, աչքիս վրայ, ահա ասեմ քեզ. աւագակ*) է իմ անունը, կարիքն է հայրենիքս, վիշտն է ինձ կերակրել, իսկ գայլը պատսպարել: Երբեմն ես սլանում էի վիշապի վրայ, բայց այժմ նա սառել կպել է գետնին, իսկ ես զառամել եմ: Մէկ լիմար ինձ ծաղրեց, ես չկարողացայ համբերել: Բայց ինչպէս տեսնում ես՝ նա անվնաս է, ուրեմն դու էլ ներքի ինձ իմ յանցանքը:

— Խօսուածքդ շատ կանոնաւոր է, նկատեց Ռինգը, իսկ ես յարգում եմ ծերութիւնը: Ուրեմն եղիր մեր հիւրը և մեզ հետ սեղան նստիր: Բայց միայն այսուհետեւ քո իսկական կերպարանքով յայտնուիր:

Հէնցոր հիւրն իրանից դէն ձգեց Թաւամաղ մորթին՝ Թագաւորն իր առջև տեսաւ կանգնած շքեղ գէնքուզրահում մտած մի կտրիճ երիտասարդ:

Հլւսիսափայլից շողշողող ձիւնի նման ինդէբորգայի աչքերը բորբոքուեցան, բայց նա առանց մի խօսք անդամ արտասանելու՝ աչքերը գետնին ձգեց: Իսկ Ռինգն այդ տեսարանի վրայ մեղմ կերպով ժպտաց և կնոջը հրամայեց հիւրի համար ամենաընտիր գինուց լքցնել այժեամի եղջիւրը:

Այսպէս ուրեմն Փրիտեօֆը՝ որպէս թէ չճանաչուած, իր արքայական ասպնջականների մօտ երկար ժամանակ հիւր մնաց:

ՅԱ



ՍԱՌՅԻ ՎՐԱՅՈՎ ԳՆԱԼԸ

Նդէբորգա Թագուհին և Թագաւոր Ռինգը ճաշի էին հրաւիրուած: Նրանց ճանապարհը սառցի վրայով պէտք է անցնէր. սառուցն էլ բարակ էր. ուստի Փրիտեօֆը խորհուրդ տուեց չգնալ: Բայց Ռինգը չստաց նրան. այլ փոթորկի նման արագավազ ձի լծած Թեթև սահնակի մէջ նստեց իր երիտասարդ կնոջ հետ ու սլացաւ հայելու նման սառցի վրայով:

Փրիտեօֆն էլ ճարը կտրած՝ հագաւ քապ-քապ ու թռաւ նրանց ետևից: Նա մին հսնում էր նրանց, մին ետ մնում. այդ ժամանակ նա այնպէս հմտութիւնով գանազան գծեր էր ձևակերպում սառցի վրայ, որ ինդէբորգան շատ տեղ իր անուան վրայով էր անցնում: Բայց ծովի աստուածուհի Ռանան դարանամուտ եղած նրանց էր սպասում: Նրանց տակից կտրեց սառցի ներքին կեղևը, սառուցը ճեղքուեց և սահնակի առաջ երևաց ծովը որպէս բերանը բաց անդունդ: Ահից ինդէբորգան մտնելի գոյն ստացաւ և ամուր բռնեց իր ծերունի ամուսնուց: Փրիտեօֆն իր ուժեղ ձեռքով իսկույն բռնեց արքայական ձիու բաշից և սահնակը ամուր սառցի վրայ դրեց:

— Զնորհակալ եմ, ասաց Ռինգը, — ինքը Փրիտեօֆն անգամ քեզ կրնախանձէր: Գո այս ծառայութիւնը ես չեմ մոռանալ:

Բայց նոր փորձութիւն էր պատրաստվում Փրիտեօֆի համար:

*) Thiofr — աւագակ (եր անուան երկրորդ կէսն է):

Դա ֆրէան է, դա Ռօտան *) է,
Բայց նոցանից էլ գեղեցիկ,
Գըլխի զարդը ծիրանեգոյն,
Կապույտ փետրից սիրուն փնջիկ:

Կազմուպատրաստ են ամենքը,
Փչիւր փողըդ, ո՛վ փողահար.
Հնապա, քաջեր, թող որսերը
Ձեզնից լինին սարսափահար:
Էլ մի՛ նայէք ո՛չ սար, ո՛չ ձոր,
Թող որոտան ողջ վայրերը,
Ահա բաղէն բարձրացել է
Մինչև Օղիւնի **) պատերը:

Անտառի խեղճ գաւալները
Զփոթուելով խըրտնոտեցան,
Գազանները զարհուրելով՝
Իրանց խորխոր բներն ընկան:
Ահա փախած որսի հետքով
Վազում է մեր դիւցազնուհին,
Ճապուկ նիզակը ճոճելով՝
Հասուէհաս է չար գազանին...

Ծեր Ռինգը բաւականին
Յետ է մնացել մեր քաջերից,
Տխուր, տըտում Ֆրիտեօֆը
Ձի հեռանում նրա կշտից:
Զատ խորհուրդներ մութ ու խաւար
Փոթորկվում են քաջի սրտում,

*) Օղին ասածու վաճանակիւր աղջկերանցից մէնը:

**) Աստուածնիւի հայրը, և ասանձնապէս պատերազմի և որ-
տորդութեան աստուածը:

Ո՛չ մի ուրախ ըզբօսանքից
Սև մտքերը չեն փարատվում...

«Աւաղ, ինչո՞ւ անմտաբար
Ես իմ ծովից հեռու փախալ,
Ինչո՞ւ այս դառն աղէտքներին
Ես իմ կամքով մատնուեցալ:
Ծովը խոր է. նա կուլ կրտալ
Սև ու տխուր մտածմունքը,
Մէկէլ տեսար հոգմը փչեց՝
Էլ չերեցցաւ նորա հետքը:

«Միշտ Բալդուրեան տաճարն եմ ես
Աչքիս առջև կանգնած տեսնում,
Օրիորդի տուած ուխտն է
Սիրտս ու հոգիս միշտ պղտորում.
Այսուհետև էլ իմը չես,
Աստուածներն են այդ պահանջում»...
Ահա այսպէս խորասուզուած՝
Իւր բախտիցն էր նա տրտնջում...

Այսպէս մտան մի խուլ ձորակ,
Ուր երկինքն էլ չէր երևում,
Լայնատերև խիտ ծառերը
Խաւար ստուեր էին գցում:
Ռինգն իջաւ իր ձիուցը
Ու դառնալով Ֆրիտեօֆին՝
— «Ահա լաւ տեղ, ասաց նորան,
Իջնենք այստեղ մենք միասին:

«Գիտես ինչ կալ. ես յոգնած եմ,
Արի՛ փոքր ինչ հանգստանամ,
Եթէ գոնէ մի ժամ պառկեմ,
Բաւականին կուժովանամ»...

— «Բայց, թագաւոր, ինձ որ լսես, Կոշտ ու թաց է գետինն այստեղ, Մեզնից մօտիկ մի մեծ տուն կայ, Եթէ կուգես, զնանք այնտեղ»...

— «Նինջ ասածըդ աստուածի պէս Մօտ է գալիս անակնկալ, Թէ տանտէրը հիւրի առջև Մի պահ կարող չէ քնանալ»...
Փրիտեօֆն առաւ իւր վերարկուն, Կանաչկոտում մի տեղ փռեց Ու կոնուզի սիպտակ գլուխը Իրա ծնկան վերայ դրեց:

Քունը տարաւ այնպէս անուշ, Ինչպէսոր թունդ կուի վերջին Քնանում են վեհ դիւցադունք՝ Վահանները դիւատակին, Կամ ինչպէս մի անմեղ մանկիկ, Անուշանուշ մշմշալով Իւր հարազատ մօր գրկումը:
Քուն կրլինի խաղաղ սրտով:

Բայց սո՛ւստ. մէկ տես սև թռչունը Ի՞նչ է երգում. լաւ ականջ դիր. «Փրիտեօֆ, տես քո հին հաշիւը, Քնած ծերին, շոտ, ըսպանիր... Ոչ ոք չրկայ, որ քեզ տեսնէ, Ինքըդ կառնես նորա այրին. Դարձեալ սիրով գիրկը կառնէ Սիրուն հարսը իւր փեսային»...

Բայց սո՛ւստ. դեռ կանց, ահա այժմէլ



Փրիտեօֆի փորձութիւնը:
Սիպտակ թռչունն է երգողը.
«Ոքմին չրկայ... բա Յղինը»...

Մոռացել ես քո Ստեղծողը...
Դու սպանած կամ անգէն մարդու.
Հիմա քնածին պիտի մորթես...
Ո՛հ, չար ճամբով ի՛նչ չես անել,
Որ նորանով փառքի՛ հասնես»...

Չորս կողմ տիրեց խոր լուսթիւն.
Փրիտեօֆն առաւ իւր երկսայրին,
Յուզուած սրտով ձգեց հեռու
Խաւարի մէջն անտառային...
Սև թռչունը լուռած թռաւ
Դէպի խաւար Սանդարամէտ,
Բայց սպիտակն անուշ երգով՝
Առ Արեգն ճաճանչաւէտ:

Էլ քնած չէ ծեր կոնուկը:
«Լաւ քնեցայ. շատ պատուական.
Քաղցր է ննջում, ով որ ունի
Հսկող սրով հսկայական...
Բայց ինձ ասան, ով անծանօթ,
Ո՞ւր է սուրբդ կայծակնածին,
Ո՞վ բաժանեց ձեզ երկուսիդ,
Ո՞վ գողացաւ քո պողպատին»:

— «Ի՛հ, ի՛նչ պէտք կայ, մի՛թէ քիչ կան
Մեր երկրումն այնպէս սրբեր.
Չար է լեզուն սուր ասածիդ,
Նա հաշտարար չունի խօսքեր:
Պողպատի մէջ ոգիներ կան.
Չար ոգիներ մութ աշխարհի,
Քուն չեն սիրում, այլ ուզում են
Արծաթի գոյնն ալիքների»...

— «Դիտցի՛ր ուրեմն, ով պատանի,
Քեզ փորձեցի... Ես քուն չեղայ.
Անփորձ մարդին, անփորձ սրբին
Ոչով երբէք չըհաւատայ:
Հէնց որ եկար իմ ապարանք,
Ես քեզ իսկույն ճանաչեցի.
Թէև ծպտած վարպետութեամբ՝
Բայց Փրիտն է՝ սա, ասացի:

«Ի՛նչ ես կիտում խիտ ունքերդ.
Ես էլ խօսմ միշտ ծեր չեմ եղած.
Մեր ողջ կեանքը մի կուր է,
Տաքցիլսութիւն անգուռ պ մարդկանց:
Ալեւոր եմ, դու տեսնում ես,
Հուտով կիջնեմ բլրակի տակ,
Իմ ամուսինն ու երկիրը
Թող քեզ լինի այնժամանակ»...

Իսկ Փրիտեօֆը մի՛թին դէմքով
Պատասխանեց ծեր Ռինգին.
— «Ես չեմ եկել իբրև մի գող,
Որ փախցընեմ Ինգէբորգին.
Եթէ տանել ուզենայի,
Ո՞վ էր կարող ընդդէմ կենալ.
Բայց իմ միտքըն այդ չէր բնաւ,
Եթէ կուգես ճիշտն իմանալ:

«Ո՞հ, ո՛չ. այլ ես փափագեցայ
Հարսիս նայել վերջին անգամ.
Անմըտութիւն... Կայծն մարած
Բոցավառուեց կրկին անգամ...

Կոնունգ, բաւ է, որքան կեցայ
իբրեւ մի հիւր ես քո երկրում:
Աստուածներն խիստ բարկութիւնն
իմ գլխիցը չի հեռանում:

«Ճաճանչափայլ, հեղ Բալդուրը,
Որ խնամում է ամենեցուն,
Նա ինձ, միայն ինձ է ատում,
Ինձ է թողել անտեղ, անտուն:
Գիտես ինչու, ես կրակեցի
Աստուածատունն Բալդուրի,
Հիմա զայլ են անուանում ինձ,
Գայլ Բալդուրեան սուրբ տաճարի:

«Հալածում են ամեն տեղից,
Ոչոք իւր մօտ չի ընդունում,
Իմ անունը որ լսվում է,
Ուրախ մանկունք լաց են լինում...
Նզովումձ եմ ես, նզովումձ
Իմ հայրենի բնիկ երկրում,
Այնտեղ չունիմ խաղաղութիւն,
Չունիմ հանգիստ և ոչ ինձնում...»

«Դէ՛ն, դէ՛ն ուրեմն, հեռու, հեռու...
Դէպի անդունդն աղէտների.
Գնամ դարձեալ քարէ կուրծքըս
Լողացընեմ ջրումն աղի...
Թող մըրիկներ, որոտմունքներ
Բարձրացնեն գառուզոչիւն.
Դրանցում միայն ես կը գտնեմ
Հոգուս համար անդորրութիւն»....:



ՌԻՆԳԻ ՄԱՆՔ ԵՒ ՆՈՐ ԹԱԿԱՌՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Նոյեբորգային բարեմնայ ասելն էր մնում
միայն:

Փրիտեօֆը երբ մտաւ նրա սենեակը,
այնտեղ էր նաև ծերունի Ռինգը:

— Հերիք է, ինչքան ձեզ մօտ հիւր մնացի, ասաց
նրանց Փրիտեօֆը: — Բայց այս հրաժեշտիս ժամին, ինզէ-
բորգա, ընդունիր ինձանից առաջուան իմ քեզ տուած
ապարանջանը, և էլ երբէք չհանես բազկիցդ, որպէսզի
գոնէ այդ լիշատակով մենք անբաժան մնանք:

— Ահա լինչպէս ես վճարում այստեղ ձմերուղ հա-
մար, — նկատեց Ռինգը կատակով, — իսկ ինձ ոչինչ.
կարծեսթէ ես պակաս քաղցրութիւնով էի վարվում հետդ:
— Ո՛հ, Ռինգ, բացականչեց Փրիտեօֆը, — աստղալից
գիշերներով ինզէբորգայի հետ չգնատ ծովի ափ: Միգուցէ
ծովի ալիքները Փրիտեօֆի դիակը բերեն ձեզ...:

— Ո՛հ, բարեկամդ իմ, — մեղմօրէն ընդմիջեց նրան
Ռինգը, — դեռ դու երիտասարդ ես, քո ժամանակը չէ,
այլ իմ ժամանակն է: Դուրսն արդէն մահն ինձ է սպա-
սում. միայն ամօթ է թաղաւորի համար որ անկողնի մէջ
հանգիստ մեռնի:

Ռինգն այս խօսքերն աւարտելուն պէս՝ հաւատարիմ
իր պապերի սովորութեան, սուր նիզակով իր կրծքի ու
ձեռքերի վրայ խորհրդաւոր նշաններ արաւ և արիւնի

մէջ շաղախուած՝ նա իր վերջին վայրկեանին Փրիտեօֆի և Ինդէբորգայի ձեռքերը միացրեց:

Ռինգի մահից յետոյ ազգային ժողով գումարուեց՝ նոր ազգապետի ընտրութեան համար: Բաց երկնքի տակ էին հաւաքուել բոլոր ընտրող-շինականները: Եկաւ և Փրիտեօֆը՝ բերելով իր հետ Ռինգի մանուկ դաւակին, և նրա հետ միասին բարձրացաւ մի քարի վրայ: Իսկ ամբողջ սկսեց քրթմնշալ:

— 25-րդ դա դեռ ծծկեր երեխայ է. դա ինչ է որ մեզ դատէ: Միթէ նա պիտի մեզ առաջնորդէ դէպի մահաբեր պատերազմ:

Բայց Փրիտեօֆը մանուկին բարձրացնելով իր վահանի վրայ՝ յայտնեց, որ նրանք սրանից լաւ ազգապետ չեն կարող ընտրել. Օգինի արիւնը պարզ երևում է նրա մանկական գեղեցկութեան մէջ, և թէ ինքը երգւում է՝ իր սրով պաշտպանել երկիրը, մինչև մանուկի հասակն առնելը:

Իսկ թագաւորի որդին՝ որ ժայռի գագաթին թառելած արծուի ձագի նման նստած էր Փրիտեօֆի վահանի վրայ, ձանձրացաւ սպասելուց, թառա ցածր և անվնաս կանգնեց քարի մօտ:

Երբ այդ տեսաւ ամբողջը, միաձայն հաւանութիւնով նրան թագաւոր ընտրեց, իսկ Փրիտեօֆին՝ եարլ—կոմս, խնդրելով նրան, որ ամուսնանայ իրանց երիտասարդ թագուհու վրայ և միառժամանակ կառավարէ երկիրը:

— Այստեղ դուք հաւաքուել էք՝ որ թագաւոր ընտրէք և ոչ թէ հարսը պսակէք, պատասխանեց նրանց Փրիտեօֆը: — Բալդուր աստուածը դեռ իմ յանցանքս չի ներել. և միայն նա կարող է դարձնել ինձ իմ նշանածս:

Այս ասելուց յետոյ նա գլուխ տուեց մանուկ-թագաւորին, համբուրեց նրան և՛ առանց յետ անգամ նայելու, հեռացաւ գնաց:

ԺԳ

ՀԱՋՏՈՒԹԻՒՆ



արձեալ իր հայրենիքումն է Փրիտեօֆը. նա կանգնած է իրանց զերեզմանատան բլրակի վրայ: Նրա աչքի առաջ մի զարմանալի տեսարան է բացվում. Բալդուր աստուծուն մի նոր մեհեան է կանգնեցրած, որ նախկինից շատ աւելի շքեղ է: Փրիտեօֆը հասկացաւ, որ այս մի տեսիլք է բարձրից ղրկած, և հրդեհին զոհ զնացած մեհեանի փոխարէն բարձրացրած է նորը և առաջնուանից անասանելի գեղեցիկը:

Մեհեանի օրհնութեան օրն էր: «Արծաթադոյն ծածկով թներով» տասներկու օրիորդ զոյգզոյգ դուրս գալով՝ սկսեցին իրանց սրբադան կաքաւումն Բալդուրի սեղանի առաջ:

Տեսողին այնպէս էր թւում, թէ այդ կաքաւողները հասարակ մահկանացուներ չեն, այլ յաւերժահարս-

ներ անտառային մարգագետնի վրայ, որ սրսկուած է լինում առաւօտեան աղամանդի նման շողշողուն ցօղով: Այդ յաւերժահարսների երգը փառաբանութիւն էր լուսափայլ Բայդուրին՝ որ նա ընկել էր իր եղբօր ձեռքից. նրանք երգում էին, թէ ինչպէս ամենքն էլ՝ երկինքը, ծովը, երկիրս սուղ էին անում նրա համար:

Փրիտեօֆը յենուած իր սրի վրայ՝ լսում էր յափշտակուած. նրա աչքի առաջ նորից կենդանացան իր մանկութեան, իր պատանեկութեան պայծառ օրերը, և նրա խոտացած հոգին տկանավրայ եղաւ:

Հէնց այդ րոպէին անլսելի կերպով մօտեցաւ նրան քրմապետը, բայց ոչ երիտասարդ ինչպէս Բայդուր գեղեցիկ աստուածը, այլ մի բարձրահասակ, մինչի գօտին հասած սպիտակ միրուքով ձերուհի:

— Ես քեզ սպասում էի, որդեակ, սկսեց ձերունին: Աստուածները կեանքի կշեռքի թաթերի վրայ երկու ծանրութիւն են դրել՝ երկրային ու թր և երկնային հեղուկութիւնը: Գուռըն մն հաշտուել ես ուզում: Բայց արդեօք դիտես թէ ինչ ասել է ճշմարիտ հաշտութիւն: Կայ այնպիսի դոհ, որ աստուածների համար թափուած արիւնի ծիւց էլ աւելի ընդունելի է, և այդ զոհը — քո վրէժխնդրութեան, քո թշնամութեան զոհաբերութիւնն է. իսկ թէ դու դեռ ես պատրաստ չես ներելու, ասա տեսնեմ, էլ ինչո՞ւ համար ես եկել այստեղ և ինչի՞ կառուցեցիր այս մեհեանը: Քարերով դու չես կարող մեղմացնել Աստուածների բարկութիւնը: Գուռ ատում ես Բէլի որդիներանց: Մէկ ինձ ասա, ինչո՞ւ համար: Արդեօք նրա համար, որ իսկույն քեզ՝ որ շինականի որդի ես, չտուին իրանց արքայական քոյրը: Բայց այդ ողջկայ երակներում Օգինի արիւնն է հոսում: Նրան մի դատապարտիր իրանց գուռ-

դութեան համար, այնժամանակ ինքդ էլ չես դատապարտուիլ... Գէլը մեռաւ...

— Մեռաւ, բացականչեց Փրիտեօֆը:


— Այո, մեռաւ: Նա պատերազմում էր Փինինների հետ. այնտեղ ի պատիւ իրանց Իւմալ աստծու մի մեհեան կար կառուցած ժայռի վրայ: Անյիշատակ ժամանակներից նրան կողպել և աչքաթող էին արել: Այդ մեհեանի մասին ժողովրդեան մէջ կարծիք կար, թէ ովոր համարձակուի բանալ այդ մեհեանի դուռը՝ Իւմալին տեսնելու նպատակով, Իւմալը նրան իսկույն տեղնուտեղը կըսպանի: Երբ լսում է այդ մասին Գէլը՝ իր չարութիւնից նա մտածում է խորտակել այդ թշնամական մեհեանը: Ուստի մօտենում է ու նրա փտած սիւները տեղահան անում: Մեհեանը իսկույն կործանվում է, իսկ Իւմալի կուռքը ընկնելով Գէլի վրայ՝ ջախջախում է նրան հէնց տեղնուտեղը: Խեղճի՝ Իւմալին տեսնելն ահա այդ է եղել միայն: Անցեալ զիշեր սուրհանդակը բերաւ մեղ այդ բօթը: Այժմ Բէլի գահի վրայ բազմած է նրա կրտսեր որդի բարի Գալֆտանը: Եղբայրական ձեռք մեկնիր նրան և աստուածներին գնհ բեր քո վրէժխնդրութիւնը:

Երբ քրմապետն աւարտեց իր խօսքը, մեհեանի շեմքի վրայ երևաց Գալֆտանն ինքը, և իր ահեղ թշնամու երկիւղից մնաց հեռու կանգնած: Փրիտեօֆը յետ արաւ մէջքից իր թուրը, դրեց սեղանի վրայ և ձեռքերը պարզած մօտեցաւ Գալֆտանին. նա կարմրելով հանեց իր երկաթէ ձեռնոցները. և տարիներով անջատուած ձեռքերը՝ եղբայրական մտերմութիւնով կրկին սեղմեցին իրար:

Եւ այստեղ արդէն քրմապետը վերցրեց աքսորեալի գլխին ծանրացած անէծքը:

Դուները նորից բացուեցան և ներս մտաւ Ինգէրորդան պսակի հանդերձով՝ սպիտակ աքիսի մորթուց լողիկը վրան. նրանից յետոյ էլ՝ «Ինչպէս աստղերը լուսնեակի ետեւից», գալիս էին իր նաժիշտները: Ներս մտնելիս տեսած լինելով իր սիրեցեալների հաշտութիւնը, արտասուքն աչքերին նաւնկաւ իր եղբօր գիրկը. իսկ սա սրտաշարժուած այս վարմունքից, իսկոյն Փրիտեօֆին տուեց իր քրոջը:

Ահա այսպէս՝ Ինգէրորդան իր ձեռքը յաւիտեան տուեց նրան, որ դեռ վաղ մանկութիւնից սիրելի էր իրան:



ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1886 թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՆՆԸ

«ԱԼԲԻՐ»

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ԷԱՆԳԷՍԻ

 զբնութիւնն թէ ուղղութիւնը, թէ գրեքը միեւնոյնը կրմնային կապի լուրջութիւնը՝ աւելի շքեղ կը հիմնադրուի ի: Պրիմիտիւնները կը լինին աւելի մեծ և աւելի շքեղ:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՔԻՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրամասն, զրոյցներ, առակներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսադրութիւններ: II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արուեստ: IV) Հետաքրքիր անդիկութիւններ: V) Այլ և այլք:

ԶՈՒԱՐՃԱԼԻՓ

VI) Մանկական, փերթիկան, շախմատի և այլ խաղեր: Րեբուտներ, թուարանական լնդերներ: Անկղծաներ, հանկուկներ, շուտանկուկներ: VII) Երգեր ձայնադրած (նոտաներով):

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և անդիկութիւններ: IX) Առաջադրութիւններ, խորհուրդներ: X) Մատենախօսութիւն և նոր գրքեր: XI) Խառն լուրեր: XII) Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Տարեկան բաժանորդներն ստանում են Երեք պրիմա՝ յունուաբլին, յուլիսին և դեկտեմբերին:

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը 3 ռուբլի է, կէս տարուանը՝ 2 ռուբլի, առանձին համարները 50 կ:

Հասցեն. Тифлисъ. Редакция „Агбюръ“. Խօի արտասահմանից՝ Tiflis (Caucas) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր — Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅԱՆ

3258

2013

